Առաջարկություններ

‹‹Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին›› ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1.Նախագծի հոդված 1-ում առաջարկվող մայր օրենքի 5-րդ հոդվածի 1.1 ենթակետում առաջարկվում է ‹‹մարմնի›› բառից հետո լրացնել հետևյալ տեքստը ‹‹(կարգավորող մարմին)››, այնուհետև ինչպես նախագծում:

Նույն հոդվածի 1.5 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողներին, ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորություն,

Նույն հոդվածի նշված մասում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

10) սպառողների առանձին խմբերի համար կարգավորվող անձի կողմից մատուցվող ծառայության տարբերակված սակագների սահմանում՝ պայմանավորված տվ յալ խմբերին ծառայութնունը առավել մատչելի դարձնելու նկատառումով:

2. Նախագծի հոդված 1-ում առաջարկվող մայր օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում երկրորդ նախադասության մեջ ‹‹հանձնաժողովը դիմում է›› արտահայտությունը փոխարինել ‹‹Հանձնաժողովի նախագահը դիմում է›› արտահայտությամբ:

3. Նախագծի հոդված 2-ում առաջարկվող մայր օրենքի 7.1 հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ՝

‹‹Այն դեպքում, երբ հանձնաժողովի մի քանի անդամ ունեն այդ պաշտոնում աշխատելու միևնույն տևողությունը, ապա նախագահի պարտականությունների կատարումը ստանձնում է հանձնաժողովի տարիքով ավագ անդամը››:

Նույն հոդվածի 4-րդ մասում ‹‹միջև›› բառից հետո ավելացնել ‹‹ լիազորությունների և›› բառերը այնուհետև ինչպես տեքստում: